# ESG դպրոց երիտասարդ գործարարների համար



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ




ԴՊՐՈՑԻ ԹԵՄԱՆ

ԴՊՐՈՑԻ ՆՊԱՏԱԿԸ

ԴՊՐՈՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԴՊՐՈՑԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԸ

ԴՊՐՈՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

ԴՊՐՈՑԻ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԴՊՐՈՑԻ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԸ



# ԴՊՐՈՑԻ ԹԵՄԱՆ

Ժամանակակից աշխարհում ընկերությունների օրակարգում իրենց արժանի տեղն են գրավում կլիմայի փոփոխության, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մաքուր տեխնոլոգիաների, մարդկային կապիտալի զարգացման, լավ կառավարման հիմնախնդիրները:

Ընկերությունների կենսունակությունն ու հաջողությունը պայմանավորվում են սոցիալական, բնապահպանական և լավ կառավարման մարտահրավերներն ընդունելու նրանց կորպորատիվ կարողություններով:



Բիզնեսը, որը բացի փողից ոչինչ չի վաստակում, վատ բիզնես է:

Հենրի ՖՈՐԴ

# ԴՊՐՈՑԻ ՆՊԱՏԱԿԸ



**Դպրոցը կրթական հարթակ է**, որը նպատակ է հետապնդում նախապատրաստել նոր սերնդի բիզնես առաջնորդներ, ովքեր կդառնան **լավ կառավարման ջատագովները** Հայաստանի գործարար միջավայրում:

# ԴՊՐՈՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ





## ԽՆԴԻՐ 1

Կենսակայունության և ESG հիմնախնդիրների վերաբերյալ բարձրացնել երիտասարդ գործարարների իրազեկվածությունը

## ԽՆԴԻՐ 2

Կենսակայունության և ESG հիմնախնդիրների վերաբերյալ խթանել բաց ու կառուցողական բանավեճը



**Կենսակայունությունը** կարևոր է ընկերությունների գործարար հաջողության համար: Դա նույնչափ կարևոր է նրանց հաճախորդների, տեղական համայնքների, շահակիցների ավելի լայն շրջանակի և շրջակա միջավայրի համար:

**Միջազգային ֆինանսական կորպորացիա, Համաշխարհային բանկի խմբի անդամ**

# ԴՊՐՈՑԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԸ



**Երիտասարդ գործարարներ** կամ գործարար գաղափար ունեցող երիտասարդներ, ովքեր նպատակ ունեն հիմնել **սեփական գործը**:



Խրախուսվում է **երիտասարդ կին գործարարների** մասնակցությունը:

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ



Դպրոցն անցկացվելու է դասավանդման **հեռավար և առկա եղանակների** համադրմամբ:

Դասընթացներն անցկացվելու են շաբաթական երկու օր՝ **երեքշաբթի և հինգշաբթի**, օրական երկու ժամ՝ **16:00-18:00** ընկած ժամանակահատվածում:

Վերապատրաստման ընդհանուր տևողությունը **20 ժամ** է:



**Կայուն զարգացումը** բավարարում է ներկայի կարիքները՝ չվնասելով ապագա սերունդների սեփական կարիքները բավարարելու կարողությունը:

**Միավորված ազգերի կազմակերպություն**

# ԴՊՐՈՑԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Լինել քաջատեղյակ** բիզնեսի զարգացման միջազգային միտումներից և **լինել առաջամարտիկը** Հայաստանում դրանց ներդրման:

Դպրոցի լավագույն մասնակիցներին տրամադրվելու է **Բիզնեսի բարեվարքության ակումբին** արտոնյալ՝ առանց մեկ տարվա վճարի, մասնակցության հնարավորություն:

**Դպրոցն անվճար է:** Կազմակերպվում է Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի կողմից՝ Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի (CIPE) աջակցությամբ իրականացվող **«Եվրոպա և Եվրասիա. կառուցողական կապիտալի համար բարենպաստ միջավայրի ձևավորում – 4-րդ փուլ»** ծրագրի շրջանակներում:

**Դպրոցի** շրջանավարտներին տրվելու է **մասնակցության հավաստագիր:**

# ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

**ՀՆԱՐԱՎՈՐ ՄԱՍՆԱԿԻՑԸ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ՝**

- բարձրագույն կրթություն ԿԱՄ լինի բուհի ավարտական կուրսի ուսանող,
- հասանելի օգտահաշիվ Linkedin սոցիալական ցանցում:

**ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ** կատարվում է դիմումի և հետաքրքրվածության նամակի հիման վրա:

**ՀՆԱՐԱՎՈՐ ՄԱՍՆԱԿՑԻ** առավելագույն տարիքը 35-ն է: Այս սահմանափակումը չի տարածվում Կենտրոնի նախաձեռնություններում ներգրավված անձանց վրա:

**ԴԻՄՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԱՅՍՏԵՂ**



Բիզնեսն իր հաջողությունը պետք է միավորի սոցիալական առաջընթացի հետ: Ընդհանուր արժեքը սոցիալական պատասխանատվություն, բարեգործություն կամ նույնիսկ կայունությունը չէ, այլ տնտեսական հաջողության հասնելու նոր միջոց: Մենք հավատում ենք, որ դա կարող է հանգեցնել գործարար մտածողության խոշոր վերափոխման:

Մայքլ ՓՈՐԹԵՐ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

**ԹԵՄԱ 1**
Կենսակայունությունը և ESG հիմնախնդիրները բիզնեսում

**ԹԵՄԱ 2**
Բիզնեսի էվոլյուցիոն զարգացումը ESG համատեքստում

**ԹԵՄԱ 3**
Իրավական հիմնախնդիրներ

**ԹԵՄԱ 4**
Թվայնացումը բիզնեսում

**ԹԵՄԱ 5**
Ֆինանսների կառավարում

# ԴՊՐՈՑԻ ՕՐԱԿԱՐԳԸ

Դպրոցի շրջանակներում միջազգային փորձագետի ներգրավմամբ կազմակերպվելու է թեմատիկ վարպետության դաս:

Դպրոցի ինտերակտիվությունը խթանվելու է խմբային քննարկումներով և հատուկ հյուրեր ներգրավելով:



Ապագան կանխատեսելու լավագույն միջոցը այն ստեղծելն է:

Փիթեր ԴՐԱՔԵՐ

# ԴՊՐՈՑԻ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԸ



Արսեն Նազարյան



Նարինե Մելիքյան



Հագեն Շվայնից



Ելենա Խաչվանքյան



Հասմիկ Խաչատրյան



Մարիանա Ջավախյան

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հարցերի դեպքում

զանգահարել՝ 033 300 790

կամ

գրել՝ darzumanyan@corpgov.am

